23/04/2025

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԵՓԼԻՆԳԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Ձգտելով զարգացնել համագործակցությունը գրեփլինգի որակյալ մասնագետների պատրաստման և մարզաձևի մասսայականացման միջոցով,

Հաշվի առնելով գրեփլինգ մարզաձևով զբաղվելու համար գրավիչ պայմանների ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքների կարևորությունը,

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը՝ ուսանողների պրակտիկաների կազմակերպման, համատեղ կրթական, գիտական միջոցառումների և սեմինարների կազմակերպման համատեքստում.

Կարևորելով գրեփլինգի շարունակական զարգացումը, պրակտիկ հետազոտությունների համատեղ իրականացումը և արդյունքների ներդրումը ի շահ հայկական սպորտի.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1. Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում «Հայաստանի գրեփլինգի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Ֆեդերացիա) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին (այսուհետև՝ Ինստիտուտ) ներկայացնում է գրեփլինգի մարզչի պատրաստման և մարզաձևի շարունակական զարգացման հետ կապված խնդիրները, իսկ Ինստիտուտն իր պատրաստակամությունն է հայտնում ընդունել այդ խնդիրները և կազմակերպել կրթական ծրագրերի և վերապատրաստումների իրականացման աշխատանքներ՝ մասնագիտացված ամբիոնում:

2.2. Ինստիտուտը պատրաստակամ է պրակտիկ թեմաներ առաջարկել ուսանողներին՝ ամբիոններում և տեղերում հետազոտություններ իրականացնելու, իսկ Ֆեդերացիան պատրաստակամ է գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել հետազոտություն իրականացնող ուսանողներին տրամադրելու՝ Ֆեդերացիային պատկանող ենթակառուցվածքներում անցնել վերապատրաստումներ, իսկ Ինստիտուտի դասախոսական անձնակազմին մասնակցել Ֆեդերացիայի կողմից անցկացվող սեմինարներին:

2.3. Ֆեդերացիան իր պատրաստակամությունն է հայտնում աջակցել Ինստիտուտում տարբեր (հարակից) մարզաձևերով մասնագիտացող ուսանողներին գրեփլինգ մարզաձևի գործնական պարապմունքները կազմակերպելու գործում:

2.4. Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.4.1. Կողմերի ներկայացուցիչներից կազմված համատեղ խորհուրդների ձևավորման, թեզերի պաշտպանությունների կազմակերպման, հետազոտողների իրականացման և Ինստիտուտի շրջանավարտների աշխատանքի անցնելուն աջակցման հարցերի շուրջ,

2.4.2. Ներդրումային, նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման գործում,

2.4.3. Գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման շուրջ,

2.4.4. Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման ուղղությամբ,

2.4.5. Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության՝ մարզաբազաների, տարածքների և գույքի օգտագործման միջոցով,

2.4.6. Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, հետազոտությունների և փորձաքննությունների իրականացման աշխատանքներում,

2.4.7. Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղությունների շուրջ:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության և համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութներ

4.1. Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2. Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3. Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4. Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5. Հուշագիրի խզման դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտին հասցնելու համար:

4.6. Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025 թ. ------ին :
4.7. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Ֆեդերացիա**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Հայաստանի գրեփլինգի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Ազատության 24
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	նախագահ՝ Սարգիս Բագինյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.